ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

0033, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 78, հեռ.՝ 060 469200, ֆաքս՝ 27 30 97, e-mails: info@yermetro.am

39/02-28-518 22.07 2021 թ.

Ձեր՝ _____ առ «____» _____202 թ.

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ
պարոն՝ Լ. ՕՀԱՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Օհանյան

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 2018թ.-ի դեկտեմբերի 6-ի 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության» կարգի 28-րդ կետով սահմանված պահանջները՝ Ձեզ ենք տրամադրում թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/51 որոշման կատարման մասին տեղեկատվությունը և հայտնում ենք, որ վերջինս սահմանված կարգով 22.07.2021թ.-ին հրապարակվել է տեղեկագրում:

Առդիր՝ 2 էջ:

ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **Ս. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ**

Մ-29997-Ա
2307 Ա

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4
ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/68 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան **21.07.2021թ.**

21.07.2021թ. ժամը 14:00-ին ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքում տեղի ունեցավ ապրանքների ձեռքբերման ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/68 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

Ա. Գրիգորյան՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Գծի և թունելային կառույցների» մասնաճյուղի գլխավոր ինժեներ,

Հ. Պետրոսյան՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Գծի և թունելային կառույցների» մասնաճյուղի գծային ուղեմասի պետ,

Ջ. Աղամալյան՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Գծի և թունելային կառույցների» մասնաճյուղի աշխատանքի նորմավորման մասնագետ,

Լ. Լևոնյան՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Գծի և թունելային կառույցների» մասնաճյուղի ինժեներ:

Հանձնաժողովի նախագահ Ա. Բեգլարյանը («Գծի և թունելային կառույցների» մասնաճյուղի պետ) բացակայում էր: Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ա. Գրիգորյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Մ. Ղազարյանը՝ «ՓՐՈՄՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի թվով 4 անդամ, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

1. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-Լ0-2021/51 բողոքի քննության որոշումը կատարելու մասին:
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ ԹԻՎ ԳԲՔԱ-ԼՕ-2021/51 ԲՈՂՈՔԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց.

1. Հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/51 որոշումը՝ 5-րդ չափաբաժնի մասով «Ի ՍԻ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար:

2. Հանձնաժողովի նիստը կասեցնել՝ 5-րդ չափաբաժնի մասով բավարար գնահատված մասնակցի հետ գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման նպատակով:

3. Գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օր, ժամ և վայր սահմանել համապատասխանաբար՝ 27.07.2021թ. ժամը 10:30, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքի 8-րդ հարկում:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՋՈՐԴ ՆԻՍՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՕՐԸ, ԺԱՄԸ ԵՎ ՎԱՅՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը:

2. Ընթացակարգի Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամ և վայր սահմանել համապատասխանաբար 27.07.2021թ. ժամը 10:30, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքի 8-րդ հարկում:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Գրիգորյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Հ. Պետրոսյան _____

Ջ. Աղամալյան _____

Լ. Լևոնյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Մ. Ղազարյան _____